մէջ ապրողները բոլորն էլ հայախօս (ինչպէս իրանք ասում են հայնակ) մահմետականներ են. պահպանել են տոհմական լեզուի հետ սովորոյթ-բարքերը, բայց Խամխալի եւ Պալխարի ժողովուրդը թրքախօս է:

Ը.

Թորդում:

Պարխալ գետի խառնուքից տասը կիլոմետր արեւելք ճորոխն առաջ գնալով՝ ընդունում է Թորդում վտակը, որը սկիզբն է առնում Կուչկուչլար լ-ից: Այս լ-ը շրթայուած են Զաուրմա, Դումլի, Կաղան, Սալախլի եւ Էգրիչայիր լ-ից. եօթն առուակներ միանգամայն, միեւնոյն բարձրութիւնից ու հեռաւորութիւնից դուրս են գալիս, միանում, Թորդումի վտակի սկիզբն են կազմում: Այդ առուակները իրարից հազիւ թէ երկուական կիլոմետր հեռուից են բղխում, ութն կիլոմետր ցած իջնելով այդ բարձունքներից, միացած մտնում են Զինակեր[1]՝

---

1 Զինակեր գեղի մօտ է Զինակեր ըմակը, (Զենակս) առուակի ակունքում գտնւում է մի փոքր Բերդ-Զինակոր-Կալասի, կամ Քեօր-Օղլի Կալասի: Լերան գագաթներին շինուած ալկատարեան բոլոր ամրոցները ամբոխը Քեօր-Օղլի Կալասի է կոչում, ժողովուրդը միականուն էլ Քեօր է ասում, ինչպէս երկականի կղզին: Քեօր-Օղլի Կալան մեր երկրում ընդհանրապէս ալկատարեան ամրոցներն են: